

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 17
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
10.07.2020-ի ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

2020 թվականի հուլիսի 10-ին, ժամը 11⁰⁰-ին, «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի գիտական խորհրդի նիստերի դահլիճում (Ալեք Մանուկյան 11) տեղի ունեցավ գիտական խորհրդի հերթական նիստը (այսուհետ՝ նիստ):

Նիստը նախագահում էր Գիտական խորհրդի նախագահ՝ Դավիթ Խիթարյանը, նիստին մասնակցում էին 34 անդամներից 29-ը:

(Մասնակիցների գրանցացուցակը կցվում է):

Նիստին առցանց եղանակով (zoom հարթակով) մասնակցում էին անդամներ՝ Թ.Հարությունյանը, Ա.Բարսեղյանը, Ս.Սիմոնյանը, Վ.Վիրաբյանը, Ա.Ավետիսյանը:

Խորհրդի նիստին հրավիրված էին ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահները, նրանցից նիստին ներկա էին Ն. Հայրապետյանը, Ա.Նադոյանը և Ռ.Ազարյանը:

Առցանց եղանակով մասնակցում էին՝ Ն. Հայրապետյանը և Ա.Նադոյանը

Հարգելի պատճառով նիստից բացակայում էին՝ Լ. Ստեփանյանը, Ա. Բաղայանը, Դ. Սարգսյանը, Ս.Առուշանյանը և Մ. Աղաբաբյանը:

Նիստին մասնակցում էր ՄԴԿԸ բաժնի պետ՝ Ա.Մազմանյանը

Ապահովված էր նիստի քվորումը:

Գիտական խորհրդի նախագահը անդամներին ներկայացրեց նիստի օրակարգը և առաջարկեց այն հաստատել:

Օրակարգը դրվեց քվեարկության

Կողմ՝ 29, դեմ՝ 0:

Խորհրդի անդամները միաձայն հաստատեցին նիստի օրակարգը:

Նիստն արձանագրեց իրավական ապահովման բաժնի իրավախորհրդատու՝ Վ. Ավագիմյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՖԿՍՊԻ Սպորտային մանկավարժության և կառավարման ֆակուլտետի ավարտական ատեստավորման քննությունների հաշվետվություն (առկա և հեռակա):

Ձեկուցող՝ ՍՄԿ ֆակուլտետի դեկան Մ.Գ.Թ., դոցենտ Տ.Սիմոնյան

2. «Կինեզոլոգիա» «Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա» և «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» կրթական ծրագրերով ամփոփիչ ատեստավորման հաշվետվություններ:

Ձեկուցող՝ ՖԴԱՏ ֆակուլտետի դեկան Կ.Գ.Թ., դոցենտ Լ.Ստեփանյան

3. Ա. Լալայանի անվան սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի ասիստենտ, մ.գ.թ. Ա.Ս.Դավթյանի «Պատանի ըմբիշների տեխնիկական հնարքների կատարելագործման մանկավարժական տեխնոլոգիան» խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկի երաշխավորման հարց:

Ձեկուցող Գիտական քարտուղար, պրոֆեսոր Ա.Չափինյան

4. Մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի մագիստրոսական թեզերի պաշտպանության հաշվետվություն:

Ձեկուցող Մագիստրատուրայի բաժնի պետ մ.գ.թ. դոցենտ Ա.Ստեփանյան

5. Այլ հարցեր

Նիստի օրակարգային հարցերը քննարկելուց առաջ Խորհրդի նախագահը առաջարկեց լսել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահների հաշվետվությունները:

Ելույթ ունեցավ Մենեջմենթի և մարքեթինգի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ՝ Ն.Հայրապետյանը, ով հակիրճ ներկայացրեց հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքները, մասնավորապես նշեց, որ հունիսի 22-ին «Մենեջմենթ» կրթական ծրագրի մագիստրոսական աշխատանքների պաշտպանությանը՝ 13 շրջանավարտներից մասնակցել են 12-ը, նրանցից գերազանց ստացել են՝ «7», լավ՝ «5» հոգի, և «Մարքեթինգ» կրթական ծրագրի մագիստրոսական աշխատանքների պաշտպանությունը տեղի է ունեցել սույն թվականի հունիսի 23-ին մասնակցել են 6 շրջանավարտ գերազանց ստացել են՝ «3», լավ՝ «3»-ը: Բավարար և անբավարար արդյունքներ, ինչպես նաև բողոքարկված գնահատականներ չեն եղել:

Ն.Հայրապետյանի կողմից ընդհանուր առմամբ գործընթացը գնահատվեց բավարար և ներկայացվեց մի շարք առաջարկություններ, որոնք մանրամասն շարադրված են 25.06.2020թ-ին կազմված հաշվետվություններում:

(Հաշվետվությունները կցվում են)

Նիստի նախագահող՝ Դ.Խիթարյանը հարց ուղղեց արդյո՞ք մենեջմենթ, մարքեթինգ, կառավարում բաժնում 1 տարին բավական է ուսումնառության համար, թե անհրաժեշտ է երկու

տարի: Առաջարկվեց, եթե երկու տարի հնարավոր չլինելու դեպքում գոնե մեկ ու կես տարի դարձնել ավելի արդյունավետ մասնագիտությանը տիրապետելու և բավարար գիտելիքներ ունենալու համար:

Նիստի նախագահ՝ Դ.Խիթարյանը հայտնեց, որ անհրաժեշտ է վերանայել կրթական ծրագրերը:

Ելույթ ունեցավ Մանկավարժության և կառավարման ֆակուլտետի ատեստավորման հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Ազարյանը հակիրճ ներկայացրեց հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքները իսկ շրջանավատների մասնակցության, գնահատականների և կատարված աշխատանքների վերաբերյալ առաջարկությունները ներկայացված են կից հաշվետվություններում:

(Հաշվետվությունները կցվում են)

Հեռավար կարգով ելույթ ունեցավ նաև «սպորտային հոգեբանություն» մասնագիտության հանձնաժողովի նախագահ՝ Ա.Նադոյանը, ով ներկայացրեց, որ մագիստրոսական թեզերի պաշտպանությունը անցկացվել է 19.06.2020թ-ին ժամը 10²⁰ zoom հարթակում: Ընդհանուր առմամբ կատարված աշխատանքները գնահատվեց դրական: Առաջարկությունները ներկայացված են 19.06.2020թ-ին կազմված հաշվետվությունում:

(Հաշվետվությունները կցվում են)

Մյուս հանձնաժողովների նախագահները չեն մասնակցել նիստին և իրենց առաջարկությունները ներկայացրել են իրենց հաշվետվություններում:

(Հաշվետվությունները կցվում են)

Նիստի նախագահ՝ Դավիթ Խիթարյանը կարևորեց դեպի դրական միտումը և հաստատեց, որ անհրաժեշտ է խստացնել օբյեկտիվության ցուցիչները, որոնցով հետազայում պետք է գնահատել գիտելիքները:

Նիստի նախագահ՝ Դ.Խիթարյանը առաջարկեց անցնել օրակագային հարցերի քննարկմանը:

1.Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց՝ Ա.Մ.Կ ֆակուլտետի դեկան մ.գ.թ. դեցենտ Տ. Սիմոնյանը: Ներկայացրեց սպորտային մանկավարժության և կառավարման ֆակուլտետի ավարտական ատեստավորման քննությունների հաշվետվությունը:

Նիստի նախագահ՝ Դ.Խիթարյանը առաջարկեց հաստատել հաշվետվությունը:

Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ՝ 29, դեմ՝ 0:

Խորհրդի անդամները միաձայն հաստատեցին հաշվետվությունը

2. Օրակարգի երկրորդ հարցը՝ «Կինեզոլոգիա» «Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա» և «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» կրթական ծրագրերով ամփոփիչ ատեստավորման հաշվետվությունը, ներկայացրեց ուսումնագիտական գծով պրոռեկտոր՝ Գ. Սարգսյանը:

Նիստի նախագահ՝ Դ. Խիթարյանը առաջարկեց հաստատել հաշվետվությունը:

Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ՝ 29, դեմ՝ 0 :

Խորհրդի անդամները միաձայն հաստատեցին հաշվետվությունը:

3. Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ գիտական խորհրդի քարտուղար՝ Ա.Չատինյանը և երաշխավորման ներկայացրեց «Ա. Լալայանի անվան սպորտի մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի ասիստենտ, մ.գ.թ. Ա.Ս.Դավթյանի «Պատանի ըմբիշների տեխնիկական հնարքների կատարելագործման մանկավարժական տեխնոլոգիան» խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկը:

Նիստի նախագահ՝ Դ.Խիթարյանը առաջարկեց երաշխավորել

Հարցը դրվեց քվեարկության

Կողմ՝ 29, դեմ՝ 0

Խորհրդի անդամները միաձայն երաշխավորեցին ուսումնամեթոդական ձեռնարկը:

4. Օրակարգի չորրորդ հարցով Մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի մագիստրոսական թեզերի պաշտպանության հաշվետվությունը ամփոփ ներկայացրեց մագիստրատուրայի բաժնի պետ՝ մ.գ.թ. դոցենտ Ա.Ստեփանյանը:

Նիստի նախագահ՝ Դ.Խիթարյանը առաջարկեց հաստատել հաշվետվությունը:

Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ՝ 29, դեմ՝ 0:

Խորհրդի անդամները միաձայն հաստատեցին հաշվետվությունը:

5. Օրակարգով դրված հարցերից բացի նիստի նախագահ՝ Դ.Խիթարյանը առաջարկեց այլ հարցերի հետ կապված քննարկել պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական աշխատանքների կազմակերպման չափանիշները:

Նիստի նախագահ՝ Դ.Խիթարյանը ներկայացրեց չափանիշները:

(Չափանիշները կցվում են)

Գիտական խորհրդի անդամների կողմից (Ա.Ստեփանյանը, Գ. Մուրադյանը, Ա.Չատինյանը):
հարցեր ուղղվեցին կապված դասախոսությունների, պրակտիկանների, ավարտական
աշխատանքների, թեզերի, ասպիրանտական աշխատանքների ղեկավարման հետ:

Հարցերին նիստի նախագահ՝ Դ.Խիթարյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ,
ինչպես նաև պարզաբանումներ ներկայացրեցին իրավական ապահովման բաժնի պետ՝
Օ.Պետրոսյանը, ՄՌԿԸ բաժնի պետ՝ Ա.Մազմանյանը

Նիստի նախագահ՝ Դ.Խիթարյանը առաջարկեց հաստատել չափորոշիչները՝ խմբագրման
պայմանով:

Հարցը դրվեց քվեարկության

Կողմ՝ 29, դեմ՝ 0:

Խորհրդի անդամները միաձայն հաստատեցին չափորոշիչները:

Սույն արձանագրությունը կազմված է 10.07.2020թ-ին և բաղկացած է 5 էջից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՊՐՈՖԵՍՈՐ՝

Դ. ԽԻԹԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝

Ա.ՉԱՏԻՆՅԱՆ